«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի թիվ 759-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«.....» «.....» 2018 թվականի N ..... -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 759-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի «Գնումների համակարգողների որակավորման շնորհման և նրանց շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 99-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 759-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 4-րդ կետում «լիազորված մարմնի կողմից ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով)։» բառերը փոխարինել «լիազորված մարմնի ղեկավարի կողմից սահմանված ստորաբաժանումը կամ ստորաբաժանումները (այսուհետ՝ ստորաբաժանում)։» բառերով.

2) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Ստորաբաժանման՝ քննությունը կազմակերպող և անցկացնող աշխատողների (այսուհետ՝ աշխատողներ) ցանկը և գործունեության կարգը հաստատում է լիազորված մարմնի ղեկավարը։».

3) 11-րդ կետում «Լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումը

(այսուհետ՝ ստորաբաժանում)» բառերը փոխարինել «Ստորաբաժանումը» բառով.

4) 15-րդ կետում «Հանձնաժողովի քարտուղարն ստուգում է» բառերը փոխարինել «Աշխատողներն ստուգում են» բառերով.

5) 16-րդ կետում «Հանձնաժողովի» բառը փոխարինել «Աշխատողների» բառով, իսկ «հանձնաժողովի անդամները և քարտուղարը։» բառերը՝ «աշխատողները։» բառով.

6) 18-րդ կետում «հանձնաժողովի անդամները» բառերը փոխարինել «աշխատողները» բառով, իսկ «ստորագրությամբ հաստատում են» բառերը՝ «ստորագրում են» բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։